ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ

01.09.2014 թ.-01.09.2015թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿՈՏԱՅՔ 2015 թ.

Հարգելի Կոտայքցիներ 2014 թվականի երկրորդ և 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013 թվականի դեկտեմբերի 18-ին համայնքի ավագանին իր N 44- Ն որոշմամբ ընդունել է 2014 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 37 մլն 848 հազար 200 դրամ , ծախսերը 40 մլն 878 հազար 200 դրամ: Պակասորդը կազմել է 3030 հազար 900 դրամ, որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին : Հողի հարկի չափը Կոտայքի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 8 մլն 400 հազար դրամ : 2014 թվականի հողի հարկը հավաքագրվել է 7 մլն 138 հազար 100 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 84,9 % -ը :

2014 թվականի գույքային հարկերը հավաքագրվել են 100 %-ով , որը բացարձակ թվով կազմել է 5 մլն 947 հազար 900 դրամ :

2014 թվականի դեկտեմբերի 17-ին համայնքի ավագանին իր N 31- Ն որոշմամբ ընդունել է

2015 թվականի բյուջեն , ըստ որի եկամուտները կազմել են 42 մլն 022 հազար 300 դրամ, ծախսերը 50 մլն 925 հազար 700 դրամ :

Հողի հարկը կազմել է 8 մլն 168 հազար 400 դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 2 մլն 011 հազար 500 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 24,7 % -ը :

Գույքային հարկերը կազմել են 4 մլն 322 հազար 400 դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 2 մլն 450 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 56,7% -ը :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 1785,0 հազար դրամի օգնություն :

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Բարեկարգվել է մշակույթի տան տարածքը, ավարտին է հասցվել շենքի վերանորոգման աշխատանքները, որի վրա 2015 թվականին ծախսվել է 4,800 հազար դրամ համայնքի բյուջեից: Մշակույթի տանը գործում են պարի և երգի, դաշնամուրի, դիզայնի դասընթացներ, գործում է գրադարանը :

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Երկարացվել է համայնքի ջրօգտագործման թույլտվության ժամկետը մինչև 2018 թվականը:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման 5 թույլտվություններ, որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարները:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կատարվել է գյուղապետարանի վարչական շենքի տարածքի ցանկապատման աշխատանքներ, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 1 միլիոն 800 հազար դրամ :

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար համայնքի հողօգտագործողներին է տրամադրվել պետության կողմից սուբսիդավորված պարարտանյութ և դիզելային վառելիք :